ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/102

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.07.2018թ. թիվ 03/26-3/12483-18 գրությամբ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.07.2018թ. թիվ 04/31.2/8324-18 գրության հիման վրա, 10.07.2018թ. «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 09.07.2018թ. թիվ 04/31.2/8324-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2018 թվականի հունիսի 22-ին գնանշման հարցման ընթացակարգով ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/8 ծածկագրով կազմակերպված ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների գնման գործընթացին 21.06.2018թ. հայտ է ներկայացրել «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն և 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը, վերջինիս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 29.06.2018թ. ներկայացվել է համապատասխան հարցում: Հարցման արդյունքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 03.07.2018թ. ստացված եզրակացությամբ պարզվել է, որ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ»:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն 13.07.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն 21.06.2018թ. հայտ է ներկայացրել ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/8 ծածկագրով ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների գնման գործընթացին մասնակցելու նպատակով:

04.07.2018թ. գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) գնահատման արդյունքների մասին թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված համապատասխան եզրակացությունը «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Վերը նշվածի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից 21.06.2018թ. ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/8 ծածկագրով գնումների գործընթացին մասնակցելու հայտ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.07.2018թ. տրամադրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ թիվ 2240 տեղեկանքի համաձայն՝ 21.06.2018թ. դրությամբ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն սոցիալական վճարների գծով ունեցել է պարտավորություն 212.719 ՀՀ դրամ գումարի չափով: Նույն տեղեկանքի համաձայն՝ ԱԱՀ-ի մասով գերավճարը կազմել է 205.704.313 ՀՀ դրամ, սահմանված չափից ավել վճարած գումարները (անցումային գերավճար) կազմել են 16.375.078 ՀՀ դրամ, որը գոյացել է մի շարք հարկատեսակների գծով կատարված վճարումներից, այդ թվում սոցիալական վճարներից:

Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունն ունեցել է 205.704.313 ՀՀ դրամ գումարի չափով կանխավճար ԱԱՀ-ի մասով գերավճար և 16.375.078 ՀՀ դրամ անցումային գերավճար (սահմանված չափից ավել վճարած գումարներ, այդ թվում՝ սոցիալական վճարի մասով):

01.01.2018թ. ուժի մեջ մտած ՀՀ Հարկային օրենսգիրքը, որի 325-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն միասնական հաշվում առկա գումարների հաշվին առաջնահերթ մարվում են, ի թիվս այլի, սոցիալական վճարի պարտավորությունները, ինչից ընկերությունը ենթադրել է, որ գերավճարից պետք է ինքնաշխատ մարվի նաև սոցիալական վճարի պարտավորությունը:

Հիմք ընդունելով նշված հարկային փոփոխությունները, էլեկտրոնային հաշվետվությունների և վճարումների ներկայացման կարգում կատարված փոփոխությունները, հաշվի առնելով, որ բոլոր հարկերը կուտակվում են միասնական հաշվեհամարին և այդ մեկ հաշվեհամարից իրականացվել է մյուս հարկատեսակների հաշվանցումը՝ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն վերը նշված հոդվածի հիման վրա կարծելով, որ այսուհետ բոլոր հարկատեսակների մասով հաշվանցումը տեղի է ունենալու ինքնաշխատ եղանակով, և ընկերության կողմից կատարված գերավճարից գանձվելու է սոցիալական վճարը, սոցիալական վճարը չի կատարել: Նշենք նաև, որ այդ ընթացքում գլխավոր հաշվապահը, լինելով վատառողջ և անցնելով ստացիոնար բուժում, հնարավորություն չի ունեցել լիարժեք իրականացնել իր պարտականությունները՝ հարգելի պատճառներով, ինչը ևս հանգեցրել է ստեղծված իրավիճակին:

04.07.2018թ. Գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների մասին թիվ 3 արձանագրությամբ արձանագրված ժամկետանց պարտավորությունները ընկերության կողմից տեղեկանալուց անմիջապես հետո՝ դեռևս 29.06.2018թ. ամբողջությամբ մարվել են և փաստացի առկա թերությունը շտկված է եղել արձանագրության կազմման պահին:

Այսպես՝ 09.07.2018թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված թիվ 2242 տեղեկանքի համաձայն՝ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն 02.07.2018թ. դրությամբ հարկային ժամկետանց պարտավորություններ չի ունեցել: Նույն տեղեկանքի համաձայն՝ ԱԱՀ-ի մասով գերավճարը կազմում է 205.704.313 ՀՀ դրամ, իսկ անցումային գերավճարները կազմում են 16.375.078 ՀՀ դրամ:

Ավելին, վերը նշվածից բխում է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ փաստացի ընկերությունը ունեցել է հարկային պարտավորությունների մասով դրական մնացորդ, ավելի վճարված գումարները՝ գերավճարները էականորեն և անհամեմատ գերազանցել են թյուրիմացաբար արձանագրված ժամկետանց պարտավորությունը,

ինչպիսի պայմաններում ընկերության կողմից խախտման արձանագրումը և գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառումը կլինի ձևական պահանջների չարաշահման ակնհայտ դրսևորում:

Միաժամանակ ցանկանում ենք հայտնել, որ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն հանդիսանում է խոշոր հարկ վճարող ընկերություն, երբևէ չի ունեցել չկատարված հարկային պարտավորություններ, մշտապես ունեցել է գերավճարներ տարբեր հարկատեսակներից, իսկ տեղի ունեցած թյուրիմացությունը եղել է ոչ միտումնավոր, ընկերությունը նպատակ չի ունեցել խուսափել հարկային պարտավորությունների կատարումից կամ ներկայացնել գնման գործընթացի պահանջներին չհամապատասխանող հայտ:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի տնօրեն Ալեքսանդր Լալայանը և լիազորված ներկայացուցիչներ Վանիկ Մարգարյանը և Արմեն Հարությունյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/102 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2018թ. թիվ 03/26-3/12483-18 գրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 09.07.2018թ. թիվ 04/31.2/8324-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 26.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 և 04.07.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի 17.07.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 03.07.2018թ. տրված եզրակացությունը,

ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար՝ ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով

կազմակերպված ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/8 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 26.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասկնակից ճանաչել «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին:

- 5.2 կետով որոշել է հաջորդ նիստը հրավիրել «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի համար ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացություն ստանալուց հետո:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 03.07.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 212.719 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 04.07.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 1.1.1 կետով արձանագրել է, որ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

- 1.2 որոշել է «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն 21.06.2018թ. դրությամբ սոցիալական վճարների գծով ունեցել է պարտավորություն 212.719 ՀՀ դրամի

չափով, իսկ ԱԱՀ-ի մասով գերավճարը կազմել է 205.704.313 ՀՀ դրամ, սահմանված չափից ավել վճարած գումարները կազմել են 16.375.078 ՀՀ դրամ, որը գոյացել է մի շարք հարկատեսակների գծով կատարված վճարումներից, այդ թվում սոցիալական վճարներից: 2018 թվականի հունվարի 1-ից գործող Հարկային օրենսգիրքի համաձայն միասնական հաշվում առկա գումարների հաշվից ի թիվս այլ հարկատեսակների մարվում են նաև սոցիալական վճարի պարտավորությունները, ինչից Ընկերությունը ենթադրել է, որ գերավճարից պետք է մարվի նաև սոցիալական վճարի պարտավորությունը, այդ իսկ պատճառով սոցիալական վճարը չի կատարել: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ այդ ընթացքում գլխավոր հաշվապահը, լինելով վատառողջ և անցնելով ստացիոնար բուժում, հնարավորություն չի ունեցել լիարժեք իրականացնել իր պարտականությունները՝ հարգելի պատճառներով, ինչը ևս հանգեցրել է ստեղծված իրավիճակին:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը որպես ապացույց Բողոքներ քննող անձին ներկայացրեց գլխավոր հաշվապահ Լուսյա Հովհաննիսյանին ամբուլատոր բժշկական քարտից 12.07.2018թ. տրված թիվ 235 քաղվածքը, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.07.2018թ. «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը 02.07.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների

հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար՝ ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են

իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 03.07.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (21.06.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 212.719 ՀՀ դրամ,

- «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն 02.07.2018թ. դրությամբ ունեցել է ԱԱՀ-ի գծով 205.704.313 ՀՀ դրամ գումարի չափով դեբետային մնացորդ և 16.375.078 ՀՀ դրամ գումարի չափով սահմանված չափից ավել վճարած գումարներ:

- «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն կարծելով, որ Ընկերության կողմից կատարված գերավճարից գանձվելու է նաև սոցիալական վճարը, համապատասխան վճարում չի կատարել, արդյունքում առաջացել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը:

- «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահը այդ ժամանակահատվածում գտնվելով ստացիոնար բուժման մեջ, հնարավորություն չի ունեցել կատարել իր պարտականությունները:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.07.2018թ. «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին տրված տեղեկանքի համաձայն Ընկերությունը 02.07.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

- Նմանօրինակ իրավիճակի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հարկային

օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 21.06.2018թ., դրությամբ ունեցած հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ Լուսյա Հովհաննիսյանի վատառողջ լինելու պատճառով աշխատանքից բացակայելու արդյունքում, ինպես նաև 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքով:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված հանգամանքում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության փաստը չպետք է դիտարկվի որպես Ընկերության կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք, հետևաբար «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2018թ. թիվ 03/26-3/12483-18 գրությամբ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ